# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2018թվականի N 35

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 13 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի մանկապարտեզի գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին:
2. Համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 28-ի թիվ 4/2-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2018թվականի N 36

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքի մանկապարեզը չի ջեռուցվում շենքային պայմաններ և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2018 թվականի նոյեմբերի 1-ից ժամանակավոր դադարեցնել <<Դիմիտրովի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը: Կազմակերպության գործունեությունը վերսկսել 2019 թվականի ապրիլի 1-ից:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին և մանկապարտեզի տնօրենին մանկապարտեզի աշխատողներին վարձատրել օրենքով սահմանված կարգով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՍՈՒՄԲՈՒԼՅԱՆ ՆՎԱՐԴ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2018թվականի N 37-Ն

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 4/2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմիտրով համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 28-ի<< Համայնքի փողոցները անվանակոչելու մասին>> թիվ 4/2-Ն որոշումը կայացվել է որոշակի թերություններով, համայնքի ավագանին որոշում է՝

Դիմիտրով համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 28-ի<< Համայնքի փողոցները անվանակոչելու մասին>> թիվ 4/2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ 6-րդ կետից հանել <<անվ.>> բառը, 7-րդ կետում <<Մեսրոպ Մաշտոցի>> բառերը փոխարինել <<Մ. Մաշտոցի>> բառով,10-րդ կետում <<Սայաթ-Նովայի>> բառերը փոխարինել <<Սայաթ-Նովա>> բառերով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ